Հաշվետվություն

2023 թվականի հունիսի 28-29-ը

Վրաստան, քաղաք Թբիլիսի գործուղման արդյունքների մասին

1. **Անուն ազգանունը.**

   Ռուստամ Բաղասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ ՊԵԿ նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վրաստան, քաղաք Թբիլիսի 2023 թվականի հունիսի 28-29-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը/աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.**

   Ընդհանուր համաժողովն անց է կացվել «Միջազգային հարկման համակարգի փոխակերպումը և հարկային մարմինները» խորագրի ներքո, որի ընթացքում քննարկվել են IOTA-ի կառավարման հետ կապված վարչական հարցեր և հարկային ոլորտի մասնագիտական թեմաներ:

6. **Քննարկված թեմաները.**

   Ընդհանուր համաժողովի վարչական նստաշրջանի ընթացքում քննարկվել են կազմակերպության գործունեության, ֆինանսական և ներքին աուդիտի 2022թ. հաշվետվությունները, կազմակերպության 2024 թվականի բյուջեն և աշխատանքային ծրագիրը, դիտարկվել են կազմակերպության 2023-2025թթ. ռազմավարության ծրագրի շրջանակներում իրականացված

աշխատանքների ընթացքը, ինչպես նաև վերջինիս կատարման մասով քարտուղարության կողմից ներկայացված առաջարկությունները, կազմակերպությունում Ռուսաստանի և Բելառուսի հարկային մարմինների անդամակցության դադարեցման հարցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովի ընթացքում մասնակիցները հավանություն են տվել կազմակերպության 2022 թվականի գործունեության, ֆինանսական և աուդիտորական հաշվետվություններին: Քննարկման արդյունքներով հաստատվել է նաև IOTA-ի կողմից իրականացվելիք 2024 թվականի միջոցառումների ծրագիրը, որով նախատեսվում է տարվա ընթացքում կազմակերպել լավագույն փորձի բացահայտման և փոխանակման մոտ երկու տասնյակ տարբեր ձևաչափերով դասընթացներ, վեբինարներ, համընդհանուր և տարածաշրջանային կոնֆերանսներ: Գալիք տարվա համար ՀՄՆԿ Գործադիր խորհրդի անդամներ են վերընտրվել Իտալիայի, Լեհաստանի, Լիտվայի, Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի, Պորտուգալիայի, Սլովենիայի և Վրաստանի հարկային մարմինները, իսկ Ավստրիայի հարկային մարմնի ներկայացուցիչը հաստատվել է կազմակերպության աուդիտորական թիմի կազմում՝ երկամյա ժամկետով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի շրջանակում տեղի են ունեցել «Հարկային մարմիններում ընթացող թվային էվոլյուցիայի ընթացքը և դրա ազդեցությունը միջազգային հարկման համակարգի վրա», «Բլոքչեյն տեխնոլոգիաների և համագործակցային տնտեսության առաջացրած դժվարություններն ու հնարավորությունները միջազգային հարկման համար» և մի շարք այլ

արդիական թեմաներով խորհրդակցություններ: Անցկացվել է նաև «Թվային փոխակերպումը՝ գործնականում» ՀՄՆԿ Տեքէքսպո ցուցահանդեսը, որին ՀՄՆԿ անդամակցող հարկային մարմինները հանդես են եկել թվային ոլորտում իրենց նորարարություններով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համաժողովին ՀՄՆԿ նախագահությունը պաշտոնապես փոխանցվել է Հունգարիայի հարկային մարմնի ղեկավարին: ՀՄՆԿ հաջորդ տարվա Ընդհանուր համաժողովն անցկացվելու է Հունգարիայում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Ռուստամ Բաղասյան

04.07.2023թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **648-Ա, 683-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Վրաստանի Հանրապետություն՝ քաղաք Թբիլիսի**
5. Գործուղման ժամկետները՝ **28.06.2023-29.06.2023թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Ռուսլամ Բաղասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 93.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	35,989.14	
	Օրերի քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	35,989.00	**35.99**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 76.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	29,410.48	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	58,820.00	**58.82**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**94.81**	**94.81**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

04.07.2023թ.